Որովհետև Եւրոպայ գնացող ազգի պատգամաւորները և այժմեան գլխաւոր գործողները արքեպիսկոպոսներ են, այդ համոզմունքով երևի «Մշակ»ի խմբագրին ևս եպիսկոպոս են կարծել։

«Կամենում էք», հարցրի, «այդ ձեր ձեռնադրած արք-եպիսկոպոսի գազէթիցն ստանալ, կարդալ»։

—Որ ուզենանք կ'ուղարկէ», հարցրին։

«Ի՞նչու չէ», շարունակեցի, «եթէ տաս ռուբլի բաժանորդագին ուղարկէք շուտով կը ստանաք»։

Տաս ռուբլու խնդիրը քիչ տարակուսական տպաւորութիւն գործեց, բայց և այնպէս երեք հոգի դանուեցին, որոնք պատրաստ էին 2 ր. 50-ական կոպէկ վճարել։ Լրութեան համար պակասումէր չորրորդը, այդ տեղն էլ ես բռնեցի և այժմ «Մշակ»ի համարները մտնում են Մագու։

«Այցելում են ձեզ հայոց վարդապետները» հարցրի.

—«Ոչ, մենք Էջմիածնից մոռացուած ենք. և ինչու համար պիտի գան. և ի՞նչ ակնկալութիւն ունեն մեզպէս աղքատ և սակաւաթիւ ժողովրդից», տխրութեամբ պատասխանում էին։

Պէտք է շնորհակալ լինենք միսիոնարներից,